891.99
Հ-76
ՏՅՈՒՆՎԱՐ է 1961 թ.

# ՎԻՊԱ։

## ՍԱՆՈՒԹԻՒՆ՝

զերկնային
մարմնոց շարժ
մանց, զլուսա
ւորացն՝ որ 'ի
նմա, և զհաս
տատութենէ
երկրի։

Զքեզ աղաչեմ ով տէր Ցէ սուա.
լեր հետևողու ինձ լերն, լյո.

# ՏԵՍՏՐԱԿ
# ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԼԻ
## ԻՄԱՍՏՆԱԽՈՀ ԲԱՆԻՒՔ.

Արարեալ Հոգելից և Իմաստուն Վարդապետին Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի. սակս զքանչելապարունեան արարչագործութեանց Ա.Յ., և յաղագս թուոց երկնից, շարժման լուսաւորաց, կարգի տարերաց եղանակաց տարւոյ, և այլոց իրաց բնականաց. ՚ի խնդրոյ զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ կրտսեր որդւոյ Հաւչակաւոր Իշխանին Հայոց՝ Ոմեկայ. Յամի տեառն 1284. Իսկ ՚ի Թուականութեն Հայոց, ՉԼԳ.

Տպագրեալ ՚ի Հայրապետութեն՝ Լուսանկար Մօրն մերոյ՝ Սբյ Գանձին Էջմիածնի՝ Տն ՂՈՒԿԱՍՈՒ Սրբազնատր Կաթղկոսի Ամ Հայոց.

Հրամանաւ Սբյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն Նուիրակի և Հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ Իշխան ազնուայ Տն Յովսէփայ Սրբազան Արք Եպսի, և Հիմնադրի նոր Նախիջեւանու և Գրիգորուպօլու Քաղաքացն Հայոց.

Արդեամբք և ծախիւք ՚ի Հնդիկս ՚ի Մադրաս Բնակելոյ Մեծահամբաւ և Բարեպաշտօն Հայկազնեան վաճառականէն.

Յամի Տն 1792. Դեկտեմբերի 17.

՚Ի տպարանի նորին Բարձր Սրբազնութեն.

Ընդ Հովանեաւ Երկնազանգէտ Սբ Խաչ Վանիցն, որ ՚ի Նորն

ՆԱԽԻՋԵՒԱՆ.

## Յառաջաբանութիւն առ բարեմիտ ընթերցողս.

Ահաւասիկ մատուցանեմ իմաստատենչ մանկան ցրդ հայկազունեաց՝ զերկս փառաւորց՝ Աշխատասէր Սբ. Աստուածաբանին մերոյ՝ Երանելույն Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և կոչի Ծործորեցի։

Արդ՝ եթէ իցեն 'ի ձեզ սիրահարուէք ծանօթութեանց գրութեան երկնային կամարաձև և խորանանման ձգմանն՝ ըստ գաւէթայ, և շրջանաց նորին, կարէք այսու դիւրաւ լինել հասու. երբև զբանալի՝ մեծապէն գանձուց՝ նախ զսա ունելով 'ի ձեռին. բանալ զայն զարմանագործ և գեղաշուկերտ զդուռն՝ մտանել 'ի նա քննութե, և սքանչացեալ ընդ անճառելի գործս արարչին, բարբառել ըստ Յոբայ, ո՜ արար զմեծամեծս և զանքննելիս և զհրաշակերտս՝ որոց ոչ գոյ թիւ։ Եւ ապա համարձակել մտանել յայլ մեծագոյն և գերապանծ գիտութիւն՝ Ածայնց խորհրդութեանց. Եւ մի ևս սիրել զկուրութիւն աղքատութեան, ոչ 'ի բնէ անտի են բարք՝ աստուածասէր ազգիս մերոյ. յաղագս որոյ և եղիքեալ դանեմք միշտ առաջի ձեր ազգաց։

Եւ զի վայելուչք են մարդոյ ուսմունք. քանզի նովաւ ունիմք մեք զծանօթութիւն ճշմարտութեան, և 'ի ձեռն նր ստանամք զլուսաւորութիւն մտաց. որով կարողանայ միտքն մեր տեսութեամբ մերձանալ առ սքանչելի լոյսն. և խրախոյս բարձնլ աղաղակել թէ՝ ո՜րք զի մեծ են գործք քո Տր. և թէ՝ լի են երկինք և երկիր փառօք քո։ Աստի՝ սխոյժ մտօք հանձնեցաք տպագրութեամբ 'ի լոյս ընծայել զսա,

և

և նուէրել Հայկազունեացդ, որդ զհետ ամբոխի ձգմամբ՝ ուղղապէս առաջնորդող ճանաչման՝ ծիցլան իրաց, ըզ կարգի, դաշակալի, զներգործութեց, և զփոփոխմանէ. Որդ օգտակար պտուղն՝ յորմէ քաղել ունիք, է մակացուին զսկզբանց և արմատոց ամ գոյից՝ թէ թշնամիք անհաշտե-լիք և բարեկամք անքակտելիք՝ կարգեցեալ և կացուցել չորից տարերացս, զյօդուածս աշխարհի, զընթացից լուսաւորաց երկնայնոց զերևութից օդականաց, զզանա-զան կենդանեաց, բուսոց և տնկոց նոցին մանաւան զայէս զառաքինութեան զանհամեմատ գեղեցիկն է, և զմիութեան ամենաշատ զպղութեն, որ է փոխանան ամ ուսմանց. զի զիմաստասիրութիւն խոկումն մահու՝ որ ասացն, անուանեաց։ Քանզի ընտիր իմաստից նպա-տակն է՝ զպանծալի առաքինութեն 'ի մարդն համբարել և զմոլութիւնս արմատախիլ լինելով մահացուցանել. հա-նելով զպատուականն յանարգէն՝ ըստ մարգարէին ե-րեմիայ, և անարգեալ զչարն առութե՝ ընտրելով զբա-րին ճշմարտութեան՝ ըստ եսայեայ.

Արդ՝ մինչ այսպէս համաձայն մարդկային հասարա-նաց գիտութի ճշմարտութե, յայնժամ ծնանի յայսմա-նէ ներքին բաւականութի. Ուր զի՝ ամ ճշմարտութի՝ ինքն ըստ ինքեանէ գեղեցկութի անպատմելի. և ըստ ասից իմաստնոյն՝ է նշոյլ մշտնջենաւոր լուսոյն, և հայե-լի անարատ՝ ած ազդեցութեն, և պատկեր առատութե նր. Ուրեմն այսուհետև անխոնջ պարապմամբ յընթերցումն սորա՝ և 'ի սորին սակս եղեալսն, զծանրաբեռնութիւն մարմնոյ՝ և զբազմահոգութի մտաց 'ի բաց լքցուք. զի լոյս իմաստիցն՝ առաւելապէս փայլեսցի 'ի միտս մեր, և զթե-թևացեալքս միրայցուցէ առ անեղն քաղցրութին ած. զի նա է որ ձգի 'ի ծագաց մինչև 'ի ծագս՝ օգտակար առող-ջութի և զարմանէ զամենայնն քաղցրութի.

Արդ 'ի հարցանելն մեր 'ի յօտար ազգաց՝ թէ առ ի՞նչ ծնեալ եղեմք որդիքս յաշխարհիս, կարողանայ-ցեմք ըստ անաքսամենեսի պատասխանել թէ՝ ծնեալ

եմք

եմք առ նկատել զարեգակն, զլուսին, զաստեղս և զեր-
կինս. Եթէ յայնս ես ոչ կալ և մնալ որպէս կապեալ և
պարաճանդեալ, այլ վերացուցանել զմիտս մեր անդր
ևս, և մտանել ՚ի ներքին կողմն վարագուրին՝ ուր գլուխն
մեր Քս եմուտ, և զհամարձակութիւն մեզ շնորհեաց
՚ի մուտս սրբութեանց արեամբն իւրով, նորոգելով
մեզ ճանապարհ նորոգ ՚ի ձեռն մարմնոյն իւրոյ՝ ըստ ա-
ռաքելոյ, սքանչացեալ ընդ պատրաստեալ վայելչու-
թիւնսն՝ զխնամատութիւնն ընդ առաքինութեանս՝ իբրև
զոսկի ընդ սարդիան՝ սքանչելապէս հիւսողաց, արժանա
նամք համարձակապէս բարբառել՝ ընդ ՚ի յերրորդ յեր
կինս յափշտակելոյն պօղոսի թէ՝ այսուհետև ոչ բարձ
րութիւն և ոչ խորութիւն և ոչ այլ ինչ արարած կարէ
մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի այ, որ ՚ի Քս յս ՚ի տր մեր.

Վասն որոյ՝ և մեր փոյթ յանձին կալեալ ջանամք
՚ի յօգուտ պատանեաց ազգիս մերոյ, և ցանկամք միշտ
զայնպիսի գրեանս տպել ՚ի նորահաստ տպարանի մե
րում, որք ՚ի Սէց և յԵրանելի Վարդապետացն մերոց
իցեն շարագրեցեալք. որք իսկապէս լի են լուսով գի-
տութեան, և պայծառ անսպառ հաճառով և յագեցու-
ցիչք անզգուճելապէս՝ քաղցելոց մտաց. Յորոց զոմանս
մինչև ցայժմ տպագրութե՝ յոսկեաճոյլ աշտանակ լու-
սաւորութեան՝ Սիրելի Ազգիդ մերոյ՝ բարձրացուցաք,
և զայլս բազումս հանդերձեալ եմք տպամբ ՚ի լոյս ածել
Օ՛րս ՚ի յընթեռնուլն. և յօգտելն ձեր ՚ի նոյունս՝
աղաչեմք յիշման արժանի.

Օժանդակութեամբ ոգի՝ Յովսէփ անարժանին
Տէր Աստուածատուր քահանայի հետաքննու-
թեան՝ Տէր-Ստեփանեանց տպագրողի. որ եմ ընդ
Մեծանուն բարեպաշտ ՍԷ Գրիգոր Սրբոյ
նախնի, և աշակերտ՝ Հոգելոյս Հայրապե
տին Սիմէոնի Մեծի, անուանի ջանիւ ՚ի
պայծառացուս՝ Սրբոյ Աթոռոյ եմ.

ՅՍ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

*Յաղագս երկնային շարժմանն նուաստ Յօհաննիսի Երզնկացւոյ շարադրելոյ յիմաստնոց բանից. 'ի խնդրոյ [illegible] և եր[illegible] պատանւոյն պարոն Աղթանկայ.*

Ամենայն ոք՝ որ զբան որ է ծնունդ ուսմանն մտաց, գրով 'ի քարտիսի կամիցի դրոշմել. պարտի և զնորին պատճառն՝ յանդիման կացուցանել. Զիզի մեր չին ժամանակին ծննդոց մարդկան՝ յօժարուն և սէր խնդրողի բանին, և աշխատանք տանողի խնդրոյն, մի ծածկեսցի 'ի բանասիրաց և յաշխատասէր անձանց. Զի կարօտքն բանի՝ իբրև զերկիր ծարաւուտ՝ զցօղ քաղցրութեանն երկնի խնդրեսցեն. և ապա սպասաւորքն բանի՝ իբրև զամպ ընդունակ ցօղոյ՝ զառեալն յանսահման ծովէ իմաստից և 'ի գետոց հոսմանէ, յաղագս ծուլութեան մի արգելցեն.

Բաստրումս և ես նուաստ Յօհաննէս Երզնկացի աշակերտ Հոգելից Հօրն և Մեծ Վարդապետին Վարդանայ սպասաւոր որ գրոց բանի. 'ի Թվին ՉԼԳ պատահեաց գալ 'ի կողմանս ձեծապահ Թագաւորութեանս աշխարհիս Վրաց, 'ի հռչակաւոր և 'ի մեծ 'ի մայրաքաղաքն 'ի Տփխիս, փայտակարան կոչեցեալ 'ի գիրս պատմողաց. Եւ հանդիպեցաւ խօսիլ մեզ բանս քարոզութ 'ի դուռն եկեղեցւոյն՝ մեծապատիւ և խոնհմամիտ և մեծ իշխան հայոց՝ պարոն Վահրամենին. Զոր շինել էր ձեծասէր և բարի հոգի հայր նորա պարոն Սաձկն.

Եւ էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնային շարժմանն. Վասն որոյ՝ ախորժելի եղև զմարթամիտ պատանւոյն Աղթանկայ. որ էր որդի կրտսեր՝ հռչակաւոր անուան պարոն Սաձկայ. Եւ մայրենի ազգաւ Թոռն մեծի

Մեծի իշխանին Զաւալայ՝ տն Խաչենայ· որդի մօր բարեպաշտի, որ էր բնի օրինօքն զարդարեալ հոգի, և 'ի խըն դեր յորդորող զորդի

Սա խնդրեաց 'ի մէնջ յաղագս երկնի և նորին շարժմանն Յոր հարկեալ յորդորեաց զակարութիւն մեր, և մեծապէս Եպիսկոպոսն Տէր Յօհան․ յազնուա-կան զարմից· և բարեաւհմիկ հարց ծնունդ: Որ և շար-ժեալ 'ի սէրս և 'ի յուսոյ խնդրողաց, և ակն ածեալ 'ի պատուէս շնորհաշուք Տեառն՝ և 'ի դերապատիւ եկեղեցւոյ գլխոյն, 'ի նրբաշաւիղ և 'ի կարովանիտ բանից որ հարցն վարդապետաց մերոց․ և յիմաստախոհ արանց պարզեալ դրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք ձն դիւրաւ հասկանալի լինելոյ ընթերցողաց·

Արդ՝ որ դրէք յաղագս օգտի զսակաւ աշխատու-թեանս մեր· գրեսջիք և զայս նախագրութիւնս, և ըզ բանս յիշատակի անուան խնդրողաց՝ և դրողի սորին․ գրեալ լիջիք և դուք 'ի գիրն կենաց․ Եւ որ ծուլանայ և թողու զսա, ոչ լինի առանց պատժոց․ երբ յոլով աշխատութեանց՝ զիւր սակաւն գին տալ ոչ կամեցող լեալ·



Է և քաղաք՝ յիս սահմանաւ պարագրեալ կան.
յոր աշտարակք՝ կենդանակերպք՝ երկոտասան:
Որք են եօթնից՝ մոլորակացն կայս րան.
Ի մասանցն՝ ազդեն կանուխ՝ ըղձալոյր նոյն:



Յաղագս երկնից եւ չորս՝ էն երկինք, եւ ո՞րպէս իմաստութեամբ յանգոյից եղեն հրամանաւն արարչին. Ա.

ԱՐԱՐԻՉՆ ԱՍՏՈՒԱԾ՝ ԻՄԱՍՏՈՒթեամբ եւ զօրութեամբ արար զաշխարհս ամենայն զերեւելի. Իսկ երեւի զօրութիւն նորա՝ զի յոչընչէ արար զամ արարածս. եւ տեսանի իմաստութիւնն՝ զի գեղեցիկ արուեստիւ յօրինեաց զերկինս եւ զերկիր.

Չորս նիւթ արար նա 'ի սկզբան շինութեան աշխարհի. Հուր՝ եւ հողմ. Ջուր՝ եւ հող. Սոքա՝ ընկերբունք եւ արմատք են ամ գոյից. եւ են հակառակ միմեանց. Իսկ այլ արարածքս՝ ծայրք եւ ծնունդք 'ի սոցանէ յառաջ եկեալ՝ եւ խառնեալ ը միմեանս, յորմէ առեղծան եղականքս, բոյսք եւ կենդանիք. Ի՞ պիտոյ էր այս չորք տարերքս. զի առանց հողոյ ոչ լինէր թանձր մարմին, եւ ոչ առանց ջրոյ՝ շաղղումն եւ միաւորութիւն, եւ առանց օդոյ՝ որ է հողմն, շարժումն ոչ լինէր, եւ ոչ առանց հրոյ՝ գոյն եւ երեւումն. Նշան որոյ՝ առեղծ զամ զգալի եւ նիւթական եղեալքս 'ի հողոյ, եւ դալարացոյց ջրովն. եւ շարժումն 'ի յօդոյն. եւ երեւումն եւ գոյն 'ի հրոյն. Ի՞ այս է զոր ասէ մեծ մարգարէն Մովսէս. Իսկ-ըզբանէ արար նա զերկինս եւ զերկիր. Զի երկինքն՝ երկու էրք է, հուր՝ եւ օդ. Իսկ երկիրս՝ երկու էրք է. հող՝ եւ ջուր.

Իսկ

Իսկ յորժամ ստեղծ զայս չորս տարերս, արու-եստ իմաստութեամբն ոչ երեւեցաւ 'ի ստեղծուածն իւր. Զի հողն ծանր էր՝ զներքի վայրն էառ. եւ ջուրն 'ի վեր հողոյն զետեղեցաւ, եւ օդն որ թեթեւ էր քան զջուրն, 'ի վերայ ջրոյն կայացաւ. Իսկ հուրն որ առաւել թեթեւ էր քան զօդն, 'ի վերայ քան զնա սահմանեցաւ. վասն զի յօդն զինջութիւն ջրոյ կայ: Իսկ քեզ օրինակ բանի-թէ առնուս աւազ՝ եւ ջուր. եւ ձէթ, եւ արկանես յաման մի խեցեղէն, աւազն՝ յատակին նստի. ջուրն 'ի վերայ գայ. եւ ձէթն 'ի վերայ քան զջուրն, եւ խեցեղէն ամանն՝ զամենեսեան 'ի ներքոյ իւր ունի. Նա այսմ նմանութեան եւ չորս տարերս գտանես. Հուրն՝ զի թեթեւ է բնութ եւ շարժուն 'ի վեր ունի, գնդաձեւ շրջապատեալ զայլ երեք տարերսն: Իսկ զի հողն 'ի ներքոյ անկեալ՝ փչեալ փեռեկեալ 'ի վեց կողմն. 'ի վեր եւ 'ի վայր եւ 'ի չորս կողմն երկրի. զհետ հրեղէն երկնի ձեւացաւ. եւ հողմն կարգեցաւ 'ի ծոց նորա որպէս յաման արկեալ: Իսկ եր-կիր՝ որ է հողն եւ ջուրն, 'ի միջոցի երկնից կառուցաւ.

Ահա այս է հրեղէն երկինքն՝ զոր արար Ած յառա-ջին աւուր արարչութեանն. որ բաժանեցաւ յերկու կիսագունդ. Զի որպէս 'ի վերայ երկրի կամարաձեւ է եւ բոլոր, նոյնպէս է եւ 'ի ներքոյ երկրի. Վասնզի հեռի է յերկրէս 'ի վեց կողմանէ: 'Ի վերայ երկրի՝ որպէս տեսա-նես զմիջօրս զայս, որ 'ի վեր է երկինքն յերկրէս. Նոյն-պէս եւ այս չափով՝ 'ի ներքոյ երկրի, ներքին փորուածն եւ ծոցն: Նոյնպէս ընդ արեւելս եւ ընդ արեւմուտս, եւ 'ի հիւսիս եւ 'ի հարաւ. հեռի է երկինք յերկրէ.

## Յաղագս Երեւորդ Երկնից, և շրջագայութեան նոցին ըստ օրինակի՝ է. Ա

Արդ՝ առաջին երկին՝ հրեղէնն է, որ ասացաւ. զոր եթեր անուանեն։ Իսկ որ 'ի յետ նորա երկրորդ երկինք՝ հաստատութիւնն է, զոր արար ած յերկրորդ աւուր արարչութեանն։ Զի ասաց ած եղիցի հաստատութիւն 'ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկնիչ 'ի մէջ ջրոց և ջրոց. և եղև այնպէս. Զի ջուրն՝ զերեսս երկրի ծածկեալ ունէր. Հրամանաւն այ 'ի մէջ ջրոյն եմուտ օդն որ է հողմն. և վերացոյց զկէս ջրոյն 'ի վեր՝ կամարաձև որպէս խորան, և այսպէս օդն և ջուրն որ 'ի վերայ օդոյն, կոչեցաւ հաստատութիւն. Եւ է այս երկրորդ երկինք՝ 'ի յօդոյ և 'ի ջրոյ. 'ի ներքոյ առաջին և վերին երկնից. որ է հրեղէն։

Եւ է երրորդ երկին օդեղէն, յորում են արեգակն և լուսին և աստեղքն, և երկինք կոչեն զերբ. Ըստ այնմ արար զլուսաւորս և եդ զնոսա 'ի հաստատութեանն։

Եւ այս երեք երկինքս՝ հեռի են 'ի միմեանց. զի որպէս օդն՝ յորում լուսաւորքն հեռի են յերկրէս, նոյնպէս ջրեղէն կամարն հեռի է յօդոյն. Նոյնպէս և հրեղէն երկինն, հեռի է 'ի ջրոյն։

Եւ այս երեք երկինքս անդադար շուրջ գան՝ զերիրաւս. Հրեղէն երկնից շուրջ գալն՝ անտեսանելի է աչաց. և անթուելի համարոց, և անչափելի. Իսկ այս երկինս՝ որ աչաց երևի շուրջ գալն. և լուսաւորքդ տեսանի. աստի իմացաք զվերինն. Եւ թէ անհաւատալի թուի քեզ, թէ որպէս ջուրն դադարի 'ի վերայ օդոյն և 'ի շուրջ գալն որպէս 'ի վայր ոչ հոսի. Քեզ օրինակ որ հաւատաս՝ զամպն տես. զի ամպն՝ 'ի ծովէ և 'ի գետոց առնու զջուրն, և վերանայ. և ածէ անձրև 'ի վերայ երկրի. և թէպէտ ջրովն ծանրացեալ է. այլ առնու և վերանայ զջուրն և հողմք 'ի ներքոյ անցեալ՝ առնել զնոսա

ընդ.

ընդ երկինս. և ոչ թափի 'ի վայր ջուրն. այլ կայ ամե-նազօր հրամանաւն նյ ծրարեալ յօդս. Եւ ըստ անհնար կութեանն նյ, ա՛ձրևէ ուր և կամի. Նոյնպէս և ջրե-ղէն երկինքն որ է 'ի ներքոյ հրեղինին, և վերոյ օդոյս, շուրջ գայ անդադար ով զնն.

Յաղագս երկրի, թէ որպէս շուրջ գան երկինքն՝ երկիրս հաստա-տուն կայ, և երկինքս զդա շուրջէ. Գ.

Ասեն իմաստունքն վասն երկրի, թէ որպէս զսկու-տեղ է. և այլք՝ թէ բոլոր որպէս գդունդ է. Եւ երկինքն պատեալ է զերկիրս, և երկիրս 'ի մէջ կայ. Եւ երկ-նից հողմն՝ որ 'ի ներքոյ երկրի կայ, ի վեր փչէ և ոչ թո-ղու որ 'ի վայր գնայ երկիրս և իւր բնական ծանրութիւն՝ ոչ թողու որ 'ի վեր շարժի. և այսպէս՝ հաստատուն կայ 'ի միջոյին.

Եւ են 'ի մէջ երկրի հրոյ երակք, և է ջրոյ երակք և կայ քամւոյ երակք. Եւ զի երկիրս ծանր է և 'ի վայր հակէ. և հողմն 'ի վեր մղէ, ջուրն որ 'ի միջոյին է, մղի ընդ հողն և յիրար կափչի. և լինի ապլպատակ, և խառ-նայ՝ և պնդի երկրային մարմինս. Ի տեղի ուր հրոյն ե-րակքն կան. ջուրն տաք գայ 'ի վեր. և ուր քամւոյն ե-րակն կայ՝ թէ հնչէ քամին 'ի ներքոյ երկրի, տեղեք որ նօսր լինի՝ յերևք ելանէ՝ և շարժ լինի հրամանաւն նյ, յորժամ կամենայ խրատել զմեզ.

Եւ այսպէս՝ երկինքն իւր արագ շրջագայութըն, ոչ թողու զերկիրս որ 'ի ներքին կիսագունդն իջանէ. Եւ զի երկիրս ծանր է, և ջուրք ծովուն 'ի վերայ երկրի է, նա հողոյն և ջրոյն ծանրութիւնն ոչ թողու որ 'ի վեր տանի. Եւ հողմն որ 'ի ներքոյ կայ՝ ոչ թողու 'ի վայր գնալ.

Եւ թէ օրինակ խնդրես, թէ որպէս կայ երկիրս 'ի մէջ երկնից. քեզ օրինակ ձու հաւուն, բոլոր դեղ-նուցն որ 'ի մէջն կայ՝ է նման երկրիս. և սպիտակուցն

օդոյն նման. և միգն բարակ որ յետ սպիտակուցին է այն ջրեղէն կամարն է, և խեձեալն՝ հրեղէն երկինն. Եւ և այլ օրինակ. 'ի կրետէս կզլին անդամանդ քարեայ տաճար է շինած, և պողպատ երկաթ է պատկեր է արարած. և 'ի մէջն թողած. ծանրութիւն երկաթին 'ի վայր հակէ և զօրութիւն անդամանդ քարին 'ի վեր քարշէ. և կայ այսպէս հաստատեալ՝ 'ի միջոցին 'ի կախ. Նոյնպէս և երկիրս՝ 'ի մէջ երկու կիսագնդին երկնից կայ հաստատեալ բանիւ հրամանին այ. որ ասէ ես հաստատեցի ըզ սիւնս նորա.

### Վասն ծովու և ամ ջուրց. Դ.

Երկրորդ աւուր արարչութեանն հրամայեաց ած ասելով. ժողովեսցին ջուրքդ որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի. և երևեսցի ցամաքն. և եղև այնպէս և զժողով ջուրցն կոչեաց ծով. Վասն որոյ՝ ասեն իմաստունքն թէ 'ի ներքոյ երկրի. և 'ի մէջն. և շուրջ զերկրօքն ջուրք են յամ կողմանց. Եւ զի 'ի ներքոյ երկրի ջուր է. վկայէ սաղմոսն. նա ինքն 'ի վերայ ծովու հիմունըս արկ երկրի. Եւ 'ի վերայ երկրիս են ջուրք ծովուն. զոր անգնդական ծով ասէ. Եւ շուրջ երկրիս ջուր է, զոր ովկիանոս ծով անուանեն, և յայս ծովս՝ որ շուրջ զերկրաւն է, ոչ նաւ եկանէ 'ի վերայ, և ոչ կենդանի կարէ բնակել 'ի նմա. զի սաստիկ սուր է, և արագապէս խառնմամբ հողմոյն՝ շուրջ գայ զերկրաւս. Իսկ յայս ծովս որ 'ի վերայ երկրիս է, եկանեն նաւք, և բնակին կենդանիք. զի կան 'ի մէջն ձկունք և բլուրք.

⁂

Եւ Թէ՝ զի՞նչ պէտս են այս ամ ջուրքս զոր ասացաք ամ. Ե

Այս է պատճառն՝ զի յամ ինչ՝ խառն է հուրն վասն պիտոյից ։ Զի տունկք և պտղաբերք՝ ջերմութի հրոյն հասանին ։ Ի՟է այն հուրս զոր մարդիկ ունին 'ի պէտս, յայտնի է ։ Այլ և 'ի հարաւոյ կողման կուրի ջերմ է, և սաստիկ տապ. ոչ միայն վասն արեգականն տապոյն այլ՝ բնական հուր խառնեալ է ընդ օդոյն, և իբրև զջուր թանձրացեալ է օդն, զոր հրեղէն ծով անուանեն ։ Ան որոյ՝ արարիչն՝ իմաստութ մեծաւ, նոյն չափովն և կշռով արար զջուրն, զի կացէ ընդդէմ հրոյն ։ Ի՟է մն պատրիկ՝ պիտոյ էր մերին ջրեղէն կամարն, զի մի հողմոյն բնութիւնն՝ որ 'ի ներքոյ նորա կան որպէս ընդ սփինակք, 'ի մեր փչեսցէ՝ և պատառեսցէ զերկնային կամարն ; և կամ յեւր սահմանեալ տեղւոյն 'ի մեր մղեսցէ ։

Որպէս և յայտնի է տեսանել՝ զոր պատառէ հողմըն. որ և զհերձուածն՝ որոտ անուանեմք. Ի՟է զի ջրեղէն կամարն՝ 'ի միջոցի հողմոյն և հրեղէն երկնից, արգել լինի հողմոյն. Ի՟է որպէս զհողմն 'ի վայր արգելէ թանձրութիւն ջրոյն, նոյնպէս և կայ ընդդէմ հրեղէն երկնից, և լինի նմա կերակուր, զի մի կլիցէ աշխարհ 'ի սաստիկ հրոյն ։ Զի 'ի ջերմութենէ արեգականն՝ և 'ի հրեղէն երկնից, կիզեալ այրէր աշխարհ ։ Վասն այսորիկ ջուր ծովու՝ արեգականն կերակուր լինի, և այլ լուսաւորացդ ։ Նոյնպէս և ջրեղէն երկինն՝ հրեղէն երկնից դիմակ լինի ։ Ի՟է զի որպէս լոյս ճրագին, պատրուկաւն զձէթն ծծէ ; և պակասեցուցանէ ։ և բժիշկն՝ սրուակօք զարիւնն ծծէ և քարշէ. այնպէս լուսաւորքդ և հրեղէն երկինն զջուրսն. Ի՟է թէ հատանէր ջուր՝ անցանէր ☉, ոպ 'ի հատանել ձիթին, անցանէ ճրագն.

Իսկ այն ջուրն՝ որ շուրջ զեզերօք երկրիս կայ. արտաքոյ քան զինքն՝ ոչ լերինք՝ և ոչ այլ դաշտաք կան, որ արգել լինի ջրոյն ։ Այլ՝ սաստիկ հողմն խառնեալ

ընդ ջրոյն, և տարածեալ է ՚ի շուրջ զալով՝ մնդէ զեզե. բոլոր երկրի. որ կայ՝ ՚ի վերայ ոչընչի հրամանաւն նոյ.

Ջուր ծովուն վասն էր աղի է. կամ զի՞նչ է պատճառն, որ այսչափ գետք ՚ի ծովն գնան և ծովն ոչ լնու լցեալ, և ջուր չափէն ոչ ելանէ. Զ.

Աստ այն աղի են ջուրք ծովու՝ զի ջերմութիւն արեգականն ծծէ և քաղէ զքաղցրն՝ և զյստակն և զանուշ ջուրսն, և յօդդ հանէ. Եւ որ մնայ ՚ի ներքին թանձր է և աղի և լեղի և պղտոր. Եւ վասն այն մնացեալ ջուրք ծովու. զի զոր տանելով զետոցն յաճելու զայն ծծէ արեգակն և պակասեցուցանէ. Զոր օրինակ թէ լնուս ջուր ՚ի պղինձս, և եփես հրով. շոգին որ ելանէ պակասեցուցանէ զջուրն. Եւ թէ ոչ լնուս ջուր անդնեն պակասի և հատանի. Նոյնպէս իմացիր զսա, որ թէ ոչ մտանէին գետք ՚ի ծով, արեգական ջերմութիւնն սպառէր և հատուցանէր զջուր ծովուն.

Եւ այլ օրինակ քեզ՝ որ գիտասցես թէ զյստակ և զանոյշ ջուրն ծծէ ջերմութիւն արեգականն. վասն այն ջուր ծովուն աղի և դառն է. Ուսեն թէ՝ յորժամ պակասի ջուր նաւորդացն, և ոչ գտանեն ջուր ըմպելոյ, վասն զի դառն է ջուր ծովուն, առնուն զաղի և զդառն ջուր ծովուն, և լնուն ՚ի կաթսայս և եռացուցանեն, և դնեն սպունգս մեծամեծս (այն զոր ամպ ասեն) ի փոխանակ կաթսայիցն՝ և զոլորշին որ ելանէ. ժողովէ սպունգն զհիւթն, և քամելով զայն՝ ժողովեն ջուրս քաղցր և ըմպեն. Է՛ և այս պատճառ, որ ոչ յաճելուն, և ոչ պակասեն ջուրք ծովուն. Զի որ ՚ի վերայ երեսաց երկրի մտանեն գետք ՚ի ծովս և յաճելուն, այն ՚ի ներքոյ երկրի երակօք քամին և ելանեն ՚ի յերկրէ՝ և ՚ի գուշտս աղբիւրանան. և այս որ մտանելով զետոյն յաճելու, ելանելովն աղբերացն պակասի.

## Վասն օրէնքն երկնից յորում կան լուսաւորքն. Ը:

Սուրբն գիրն ասէ, թէ որպէս ած զլուսաւորսն՝ և եդ զնոսա ՚ի հաստատութեան երկնից լուսատու լինել. Այս երկինս որ ՚ի յօղոյ է բաժանի ՚ի յութ, եօթն՝ մոլորակայն կոչի, և ութ՝ մոլորագունդ անուանի, զայն որ մոլորականքն են, և թն պտուտակ, և եօթն զօտի և եօթն երկինք անուանեն, և յամէն երկինք է մոլորական մի. Եւ այսն մոլորականքն ՚ի վերուստ ՚ի վայր սկսեալ. Զօհալ. Մուշթարի. Մառեխ. Շէմս. Զօհրէ. Օտարիտ. Կամէր. Այս տաճիկ լեզուաւ անուանքն են. Իսկ ՚ի հայ լեզու, Երեւակ. Լուսնթագ. Հրատ. Արեգակն. Լուսաբեր. Փայլածու. Լուսին. ՚Ի վերոյ քան զամ՛ է Զօհալն, և ՚ի ներքոյ ամ՛ է Լուսինն.

♄ ♃ ♂ ☉ ♀ ☿ ☾

Եւ այն որ անմ՛լոր գունդն է՝ են երկոտասան Կենդանակերպքն. և բոլոր երկինքն՝ է երկոտասան բաժին. և ամէն կենդանակերպ՝ յերկինս իւր տեղի ունի. վասն որոյ՝ և ճանաչեմք զերկիրս երկոտասան բաժին են արարեալ, և ՚ի վերայ կենդանակերպիցն և իւրեանց ընուէն բաժանեալ են. Եւ է աշխարհս՝ մարդակերպ.

♈ Խոյն՝ ունի զգլուխ մարդոյն. և զպարսից աշխարհն.
♉ Ցուլն՝ զպարանոցն, և աշխարհ զբաբելացիս.
♊ Երկուորեն՝ զձեռսն և զուսսն, և ունի զաշխարհն զամէից.
♋ Խեցգետինն՝ զլանջքն և աշխարհ զհայաստան.
♌ Առիւծն՝ զողն և կողքն, և աշխարհ զասիայ.
♍ Կոյսն՝ զներքին որովայնն, և զաշխարհ զելլադացիս.
♎ Կշիռն՝ երկու կուշտն, և աշխարհ զլիբիայ.
♏ Կարիճն՝ անդամքն, և աշխարհ կրետացիս.
♐ Աղեղնաւորն. բարձքն և երանքն, և աշխարհ զիտալիայ.
♑ Այծեղջիւրն՝ զերկու ծունկսն, և զաշխարհ զասորեստան.
♒ Ջրհոսն՝ սրունքն. և զաշխարհ զեգիպտոս և զլիւիա.
♓ Ձուկն՝ զերկու թաթ ոտիցն, և աշխարհ զհնդուստան

Իսկ է երկոտասան կենդանակերպքն յերկինս՝ երկոտասան ամսոց տարւոյն, և ամէն կենդանակերպ է երեսուն աստիճան, որ է երեսուն օր ամսոյ. Իսկ է բոլորանդակ երկինքն՝ երեք հարիւր վաթսուն աստիճան, որ է երեք հարիւր վաթսուն օր տարւոյն. Իսկ՝ աւելի աւուրքն որք հինգ օր՝ այլ մանրամասնից հաշիւ կայ՝ այն անտի լինի.

Իսկ գիտասջիր զի երկնից ՚ի շուրջ գալոյն լինին ժամքն՝ որք քսան և չորս պահ աւուրքն. և ՚ի ժամուցն լինին աւուրքն, և յօրերոյն՝ շաբաթքն, և ՚ի շաբաթնոյն՝ ամիսք, և յամսոյն՝ տարիքն, և ՚ի տարեացն լինի ժամանակն. Իսկ է ժամանակն ծնունդ շարժման շրջադայութեան երկնից.

Թէ որպէս շարժի և շուրջ գայ գունդն երկնից. և որպէս գնայ արեգակն և լուսին և աստեղքն. Բ.

Նաև թէ կամիս գիտել թէ ո՞րպէս ՚ի շուրջ գայ երկինքն և յայն շուրջ գալն թուելով համարին ժամքն և աւուրքն, է պատճառ շրջել երկնից. յորժամ կէս կենդանակերպ ՚ի վեր գայ ՚ի վերայ երկրիս, որ է կէս կենդանակերպն տասն և հինգ աստիճան. և տասն և հինգ աստիճանն պահ մի, որ է ժամ մի. և երբ լման կենդանակերպ մի գայ ՚ի վերայ, եղաւ յորէն երկու պահ.

Իսկ հասկացիր այս օրինակաւս. համարեայ թէ գարունն է՝ և արեգակն ՚ի Խոյն. Երկու ժամ պահն Խոյն գայ ՚ի վեր, երկու ժամ պահ այլ Ցուլն, երկու ♈ ♉
ժամ Երկուորեն. երկու Խեցգետինն, երկու Առիւծն, ♊ ♋ ♌
երկու պահ այլ Կոյսն. Այս վեց կենդանակերպս՝ ՚ի ♍
երկոտասան պահ աւուրն գայ ՚ի վեր ՚ի տիւն, և այսպէս երեկոյն լինի, և Խոյն մտանէ ընդ արևմուտս ՚ի ներքև կիսագնդոյն, և Կշիռն ելանէ յարևելս, և այսպէս ♎
հետ Կշռին՝ վեց կենդանակերպն այլ ՚ի վեր գայ, մինչև ՚ի լոյսն ՚ի երկոտասան պահ գիշերոյն, և լինի ընդ օրն և

ընդ

ընդ գիշերն քան և չորս պահ։ Իսկ դարձեալ՝ Խոյն եղանէ. որ արեգակն 'ի նմա 'ի յինքն կայ. այս մին կենդանակերպական խմոցեր գրկատամանն.

Իսկ զի՝ հանապազ վեց կենդանակերպ 'ի վերոյ երկրիս լինի, և վեց 'ի ներքոյ. Իսկ ընդ օրն, և ընդ գիշերն մին շուրջ գայ երկինքն. Իսկ արեգակն և լուսինն և աստեղքն զինի իւր 'ի շուրջ ածէ.

## Որպէս օրինակաւ ցուցանել, թէ արեգակն և այլ լուսաւորքս ընդ արևելս ելանեն. Ժ.

Բայց գիտասցես և զայս, զի երկինքն՝ յարևելից յարևմուտս շրջի. Իսկ արեգակն՝ և լուսինն և աստեղք յարևմտից յարևելս գնան, առ 'ի շեղ ընդ հիւսիսոյ՝ ընդ հարաւ խոտորեն. և դարձեալ 'ի հիւսիս՝ բարձրացեալ ելանեն և լուսաւորքս հակառակ երկնային շարժմանն. Զոր օրինակ մարդ առանէ 'ի գետ, և 'ի ջուրն 'ի վեր գնայ. գետն յորում է՝ փութով անցանէ և գնայ. և մարդն՝ 'ի ջուրն 'ի վեր փոքր փոքր կարէ գնալ. Կամ զոր օրինակ՝ թէ մրջիւն գնաս 'ի վերայ ջաղացին քարին, յոր կողմանէ քարն 'ի շուրջ գայ, մրջիւնն ընդդէմ հակառակ նմա 'ի մին այլ կողմն շարժի և գնայ. Զի արագ շրջագայութիւնն երկանին յետս դարձէ զնա, և նա 'ի հարկէ 'ի մին այլ կողմն ընթանայ. և երկանն իւր արագութեամբն տանի զնա ընդ իւր շրջելով.

Ուսանիս և զայս 'ի լուսնէն, զի յորժամ նոր ծնանի, առնու է մնանէ յարեգականն, յարևմտից կողմն երևի և օր քան զօր դէպ յարևելս առնէ զգնացսն. Իսկ երբ հնգետասան օր լինի՝ որ լուսին առնու, յարևելս երևի.

Նշան ունիս թէ այն՝ որ յամէն օր կու ելանէ յարևելից, և մտանէ յարևմուտս. այն՝ երկինքն է որ զնա ընդ իւր տանի և պատէ զաշխարհ. Այլ ինքն՝ իւր գնացիւքն ընդ արևելս ընթանայ. Իսկ այլ վկայ քեզ՝

զարեգական ընթացքն. զի կենդանակերպքն 'ի կարգի և
'ի կէս են ընդ միմեանս. Խոյն՝ և ցուլն՝ եկամուտն և այն
Եւ արեգակն կատարէ զխոյն՝ և 'ի ցուլն մտանէ. և ըզ ՐԾ
ցուլն վճարէ՝ և յերկուորսն մտանէ. և այսպէս 'ի տարին II
վճարէ զերկինսն, և զերկոտասան կենդանակերպսն
Եւ այն զոր ասեմք, թէ յամէն օր կու երթայ յարևե
լից, և մտանէ յարևմուտս. այն երկինքն է որ զնա
կու բերէ.

## Յաղագս Չորս Եղանակաց Տարւոյն : Ժ.

Եւ այլայլ շարժումն և ընթացք լուսաւորացդ. որ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ իջանեն և 'ի հարաւոյ 'ի հիւսիս ելանեն. և աստի լինի չորս եղանակ տարւոյն. գարունն՝ և ամառն, աշունն՝ և ձմեռն. Զի չորս կողմն է աշխարհի, արևելք և արևմուտ, հիւսիս և հարաւ.

Եւ որպէս բաժանեալ են իմաստունքն զաշխարհս՝ երկոտասան բաժին. և մէջ աշխարհի՝ զհնդքն հնդիկս ասեն. Եւ 'ի հնդուստանէ դէպ 'ի կողմն հարաւոյ չորս բաժին աշխարհիս այն է՝ որ անմարդաբնակ է և անշէն, զի սաստիկ ջերմ է և հրախառն օդ. վասն որոյ՝ այրեցեալ գօտի ասեն. Եւ 'ի հնդուստանէ դէպ 'ի հիւսիս՝ եօթն բաժին է այս միջոցս և է բարեխառն, և առողջ հաւնոյ և մարդաբնակ և շէն աշխարհ. Եւ որ յայս եօթնեանս յայնկոյս է 'ի կողմանս հիւսիսոյ, 'ի սաստիկ ցրտոյն և 'ի սառնամանեացն՝ անբնակ է 'ի մարդկանէ և ըշտեմարան և տեղի է ցրտոյ, և սառն օդոյ և հողմոց.

Եւ զի կողմն հարաւոյ՝ հուր է ջերմ, տօթ և տապ է. վասն որոյ՝ այն աշխարհի մարդիկքն յաճախ ջերմաթենէն՝ ով արջասպով ներկած՝ են թխացած.

Եւ այժմ զի գիտասցէր զչորս կողմն աշխարհիս. և այլ իմասցիր. զի այն երկոտասան կենդանակերպքն որ յերկինս են 'ի վերայ աշխարհիս բաժանեալ են. Զի յոր ժամ 'ի Խոյն մտանէ արեգակն՝ ուտապայ պահամայ

լի

լինի։ Խոյն 'ի մէջ երկնիցն է. և իւր դիմաց՝ կէսն է յա-
րևմուտս. վասն այն օրն և գիշերն հաւասար լինի 'ի
գարնանամուտն. և յորմէհետէ տիւն՝ յամէն օր մասն
մի աճէ. զի արեգակն՝ բարձրանայ դէպ 'ի հիւսիս յա-
♈♉ մէն օր մասն մի, երեք կենդանակերպովն. Խոյ՝ Ցուլ՝
♊ Երկաւոր, և զ. բնաւ եղանակ լայ. Զի 'ի սկսանել գար-
նան եղանակի՝ արմատք և բոյսք սերմանեն, մարդիք
զուարճանան, ծաղիկք պայծառանան, և անասունք, և
թռչունք 'ի ծնունդս գան. Եւ այս երեք կենդանակեր-
պովս՝ գնալով ընդ հիւսիս՝ և 'ի վճարել գարնան եղա-
նակին՝ մտանէ արեգակն 'ի Խեցգետինն. տևէ սարա-
տանն. և սկիզբն լինի ամառան եղանակին և լինի յայնմ
օրն հնգետասան ժամ. և գիշերն ինն. և յամենայն 'ի
հիւսիսակողմն երեք ամիս՝ կենդանակերպովն որ է
♋♌♍ Խեցգետին՝ Առիւծն՝ և Կոյսն, առնէ զեղանակ ամա-
ռան, յամենայն օր մասն մի ցածնալով. Եւ զի 'ի հիւ-
սիսոյ կողմն է յայնժամ արեգակն, ցուրտն հալածէ 'ի
ներքոյ երկրի. և զօդն՝ որ 'ի վերայ երկրի ջեռուցանէ.
և զխոնաւ գիջութիւնն՝ որ 'ի ներքոյ երկրի է ծծէ. և
զերմանիս և զպտուղս պարարեալ այնդէ և հասուցանէ.
Եւ 'ի վճարել զամառան կենդանակերպսն՝ մտանէ 'ի
♎ Կշիռն. և սկսանի այնուհետև աշունն. և լինի քաղցրա-
խառն և միջակ օդն. և դարձեալ հաւասարին տիւն և
գիշերն. և ապա փոքր փոքր ամենայն աւուր մասն մի
խոնարհի, և իջանէ ընդ հարաւ. և փոքրանայ օրն, և
ցրտանայ օդն, և զ.ջ մտանէ 'ի յեղանակս ձմերան. Եւ
'ի հեռանալ արեգականն ընդ հարաւ, և 'ի ցածանալն՝
գիշերքն մեծանան, և հիւսիսային հողմն զօդն սառուցա-
նէ. և հնչեն հիւսիսային սառնամանիքն, և լինի ձիւնա-
բեր բերմունք. Եւ այս՝ վասն այնորիկ լինի, զի արեգա-
կանն ջերմութիւն 'ի հարաւ է 'ի ցած դիհն, և հիւսի-
սային հողմն զօրացեալ հալածէ, զհարաւային ջերմ օդն
'ի ներքոյ երկրի արգելեալ փակէ. և սառուցեալ այնդէ
զերեսս երկրի. Եւ վասն այնորիկ աղբերակունքն՝ ձմե-

ռն

արն ջերմ և տապ բղխեն. զի արեգականն ջերմութիւն և հարաւոյին հոյն զօրութիւն՝ 'ի ներքոյ երկրի մանկ ջեռուցանեն զինութիւն ջրոյ. Այլ և յամառնային նշանակն՝ որ արեգակն 'ի հիւսիս բարձրանայ՝ զջուրսն հալածէ, և 'ի ներքոյ երկրի փակէ. և վասն այնորիկ աղբերսն սառն և ցուրտ բղխեն.

Յորժամ այս երեք կենդանակերպսն կատարեցձմեռն, որ է Այծեղջիւրն՝ Ջրհոսն՝ և Ձուկն, մեծ ♑ ♒ ♓
մասն աճէ, և բարձրանայ և հասանէ 'ի մէջ երկնից, և 'ի խոյն. որ և գարուն լինի.

Եւ այսպէս ծանիր զշրջանն երկնից, և զգնացս լուսաւորացն, և զփոփոխումն եղանակացն.

### Վասն եօթն գօտեացն՝ որք ասին եօթն պարունակք. և կոչէ եօթն երկինք. ԺԷ.

Այս եօթն երկինքս՝ եօթն Մոլորակացն տեղի են և մոլորականքն այսոքիկ են. Զօհալ, Մուշթարի, Մառեխ, Շամս, Զօհրայ, Օտարիտ, Լուսին. ♄ ♃ ♂ ☉ ♀ ☿ ☾

Իսկ յորժամ յերկրէս 'ի վեր խնդրես, Առաջին գօտին Լուսինն է. որ կոչի հոռոմերէն սիլինոս. փռանկերէն լունայ. տաճկերէն ղամար. և հայերէն լուսին. և է մօտ երկրիս քան զամ աստեղս և իւր գնացից աստիճանքն նուրբ է և կարճ. Զի իւր կամարն փոքր է քան զամ լուսաւորսն. կենայ յամէն աստեղծանսն՝ երկուժամ, պակաս չորս մասն. և 'ի կենդանակերպսն՝ երկու օր և կէս. Զամն և ինն օր և կէս վճարէ զամ երկինքն և նոր ծնունդ առնու. և լինի ինորէ 'ի նոր քսան և ինն օր և կէս. ☾

Երկրորդ գօտին՝ որ 'ի վերոյ լուսնին, Փայլածուն է. ☿
հոռոմերէն եռմիս ասի. զալմատերէն միրզուռուշ. տաճկերէն օտարիտ՝ և վճարէ զիւր երկինքն 'ի տասն ամիսն.

Երրորդ գօտին՝ Լուսաբերն է հոռոմն ափրոդի- ♀

տէս

տէս ասէ. փռանկն վէնուս վէներուս. տաճիկն զօհրայ. 'ի տասն ամիսն վճարէ և գա:

☉ Չորրորդն՝ Արեգակն է. հոռոմն հելիոս ասէ. փռանկն սօլ. տաճիկն շամս. և երեսուն օր կենայ 'ի կենդանակերպն:

♂ Հինգերորդն՝ Հրատն է. հոռոմն արէս ասէ. փռանկն մարոշ. տաճիկն միրրիխ. քառասուն օր կենայ 'ի կենդանակերպն:

♃ Վեցերորդ՝ վերև Հրատին Լուսնթագն է. հոռոմն զեւս ասէ. փռանկն յուպիթէր. տաճիկն մուշթարի. 'ի մի ամսին երկոտասան օր կենայ:

♄ Եօթներորդ՝ վերև լուսնթագին՝ Երևակն է. հոռոմն կռոնոս ասէ. փռանկն սաթուռնուս. տաճիկն զօհալ. սա 'ի մի ամսին կենայ երեսուն օր, և 'ի երեսուն ամին պատէ զերկոտասան կենդանակերպսն:

## Յաղագս օդոյն որ է հողմն, որ առնէ ձայն: ԺԲ

Այն սքանչելի արարչեան՝ զմին բնութի իրացն 'ի բազումս բաժանէ. և բազում անուանմնք կոչէն. Օդ 'ի չորս տարերացն մինն քամին է. որ օդ ասեմք. և այս մինն՝ յեղացեղ անուանս ունին. Օդ ի ասի հողմն՝ քամի և օդ. Այս ատի լինի ամպն՝ ձիւնն, եղեամն. աղեղն՝ որ լինանէ, որոտն, շանթերն, յոլմունք, և փայլակն, և այլ բազում իրք:

## Թէ ուստի՞ լինին այսոքիկ ՚ի յօդն և արդեօք. ԺԳ

Երկու գոլորշիք որ ելանեն յերկրէս ՚ի վեր՝ որ ասեն բուխար. և ՚ի վեր բարձրանան՝ նոքա և անտես աչաց. մինն գէճ է, և միւսն չոր. Այն որ գէճն է յաղբերաց՝ ՚ի գետոց և ՚ի ջրոց ելանէ. և այն որ չամաքն է ՚ի չոր և ՚ի ցամաք գոլորշեացն լինի, և ՚ի հողմոյն որ զծուխ վերանայ. Այն որ գէճն է՝ անտի լինի բոլոր սառնամանիքն՝ ամպք՝ անձրևք ձիւնք կարկուտք և այն որ չոր գոլորշին է՝ որ է բուխարն յաշխարհէս, անտի լինի ամպի ամպի հողմք՝ որոտմունք՝ փայլատակմունք՝ կայծակն՝ հրձգութիւն, և այլ որ ինչ սոցին նման է.

## Զի՞նչ է Բոցն. ԺԴ

Բոցն ՚ի զօրութենէ ամպոյն է. զի յորժամ օդն թանձրանայ, բոց դառնայ. և է բոցն քան զօդն թանձր և քան զամպն նօսր. և ունի սակաւ մի գիջութիւն, որ խոնաւութեանն է զերեսս երկրի. զոր կոչեմք և մառախուղ.

## Զի՞նչ է Որոտն և Կայծակն. ԺԵ

Յորժամ հողմն որ է քամին՝ բռնութեամբ հնչէ՝ և ՚ի մէջ ամպոյն մտանէ, յայնժամ զթանձր ամպն պատառէ, և լինի ձայնթմունք ՚ի պատառմանէս. զոր և որոտ անուանեմք. և ՚ի հողմոյ յերար շփելոյն և ՚ի ձնշելոյն հուր փայլէ, զայն փայլատակումն ասեն և կայծակումն. Զի հուրն յոյժ արարածս խառնէ, և առնլի յօդդ. և երբ հատանի հուրն յամպոյն, թէ թանձր ելանէ, յերկիր անկանի և վնաս առնէ. և թէ նօսր ելանէ՝ ոչ թողուն օդքն յերկիր, այլ ընդ օդն ցնդի անվնաս.

### Ձկան՝ որոց էր ուղևնին և խոյս։ Ժ.Զ.

Բանզի ձմեռն ամպն նօսրացեալ է․ զի ձմեռն հիւսիսային հողմն հնչէ, այն նօսրացեալ զամպն, և առեալ դառնայ ամպն․ զի հարաւային օդն է որ թանձրացուցանէ զամպն․

### Ընդէ՞ր ձիւն սպիտակ է որպէս աղ։ Ժ.Է.

Բանզի 'ի թանձրութենէ ամպոյն՝ և 'ի բռնութենէ հողմոյն՝ չկարէ անձրևն 'ի վայր հոսիլ․ իսկ 'ի դողոյն՝ և 'ի պատառելոյն թուլանայ հաստատ, և արկանէ զանձրևն․ Եւ զոր օրինակ մայր՝ զմանուկն յորժամ ծնանի, մեծամայն զառայ, և մէծ այն զառայ, զի զհողին յիւրն քարշէ․ որ զմնչական երակն ունէ, և զմանուկն 'ի վայր բերէ և ծնանի․ Այնպէս և երկիր սառուցեալ և պաղեալ է 'ի ձմեռնային ժամանակս, և պնդեալ բնութիւն հողոյն․ մի այնորիկ՝ պէտոյ է ձայն որոտալոյն, զի թուլասցի բնութիւն հողոյն և բոյսք և սերմանիք յերկրէ 'ի վեր ծնանիցին, և ծառքն ծաղկին փթթեսցեն․ և այս՝ 'ի ձմեռնային կապանացն 'ի բաց արձակին․

### Յաղագս Ձեան և Եղեան։ Ժ.Ը.

Յորժամ արեգակն 'ի հարաւային կողմն ցածանայ 'ի խոնարհ, յայնժամ հիւսիսային կողմն զօրանայ և զօդն յիւեար խառնէ՝ և թանձրացուցանէ, որ ամպ լինի և կարկուտ, և 'ի վայր հոսի սպիտակ և փափրատեալ․ զի ցուրտ քամին՝ փնտոցուցեթի ջրոյն այսպէս առնէ․

Երբ թանձր և մեծ թափի 'ի վայր, այն տաղտապարափ ասի․ և որ սօսր և մանր՝ այն ձիւն կոչի․ Իսկ 'ի գարնանային ժամանակն՝ և յամառնային և յաշնան ցենն՝ օդն ժողովէ զջուրն 'ի ծովէ և 'ի գետոց, և առեալ յերկրէ 'ի վեր բարձրանայ, և 'ի քաջ ամպոց թօթափմանէ լինի անձրև․ զի 'ի գարնան ժամանակն օդն պարարտա-

նայ 'ի գիջութէ ջրոյն, և յարեգականն ջերմութեն թանձ-րանայ և խոնարհի 'ի ծոցն, և առեալ բորբռանայ. զի հողմն 'ի ներքոյ ամպեայ՝ առեալ տանի. և հողմոյն զօ-րաւորին և որոտմանն՝ օդն պատառի և թաւալանայ և անձ-րեւն 'ի վայր հոսի.

## Յաղագս Կարկտի. ԺԹ.

Կարկուտն լինի 'ի սառուցից և 'ի ցուրտ քամեացն, որ չուէ 'ի հի սրայ կողմանէ. և 'ի սառուցից փչմանէ հողմոյն՝ սառեալ բարբէ և մնայ փոսորաւթի ջրոյն, և շաղեալ յերկիր թափէ. է որ ուժով և խիտ. և է որ նուազ. և այս լինի 'ի խորան և 'ի պատուհաս մեղուցելոց.

## Թէ ուստի՞ լինի Ցօղն եւ եղեամն. Ի.

Լուսաւորքդ՝ օդով զջուրն ծծեն և 'ի վեր քարշեն. երբ արեգակն ծագէ, թուլացուցանէ զօղն. և այն որ մնացեալ է 'ի յօդն՝ 'ի գետին իջանէ և ցօղ կոչի այն. իսկ 'ի ցուրտ ժամն՝ թերասառոյց լինի և կոչի եղեամն.

## Զի՞նչ է Ծիածանն՝ որ երեւի, որ ասեն տէրունի գօտի. ԻԱ.

Պատճառ աղեղն իջանելոյն՝ գիջութի օդոյն է և ջեր-մութեն արեգականն. Զի 'ի փոխանակ անձրեւին՝ գիջութեան որ յօդն է մնացեալ, և արեգականն ջեր-մութեն՝ յերեւար խառնին. օդոյն գիջութեն 'ի ներքուստ, և արեգականն նշոյլքն 'ի վերուստ մարմանին, և 'ի նոս-րութեն օդոյն՝ գունագոյն և երփներփին երևի կամարաձև որպէս զերկնային զգունեցն. Զի գոյն երկրին՝ և կանա-չագեղ բուսոյն՝ և ջրոյ և հրոյ՝ յերեւար խառնին, և այնպէս երեւին. Թէ մէկ մէ զաւին որ երեւի, նշան զա-դարելոյ անձրեւին է և պարզելոյ. և թէ երկու երևի յայլ և այլ դին, զյորդ և զառատին անձրև նշանակէ. Նա՛ 'ի սկզբանէ աշխարհի էր սա, զի հետեւանք է տարերցս. այլ ծուխն

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Ա-936
10542

ծուխն հեռաւանք է հրոյ· որ քամի դէմ խոնաւութեան՝ ի հրոյին կրակոյն, և ապա յըմփէ բոց հրոյն. Այս այսորիկ են ած 'ի նշանս՝ 'ի յորդութեան անձրևային դադարման.

### Թէ ընդէ՞ր հողմն որ շրջէնց առնուն և քանի՞ ազգ են. հողմոց ԻԹ.

Է ազգ մի որ շանթիք անուն, որ 'ի հրեղէն երկնիցն կազմեալ՝ և 'ի վերայ հողի և ջրատարի ուրէք. այլ յորժամ յերկիր անկանի, ծակէ զթանձրութիւն երկրի, և զոր ինչ գտանէ այրէ, և ընդ թափն 'ի վերայ անցանէ 'ի ներքի կնքաղուածոց յիւր ազգակիցն ուստի անկեալն է.

Եւ է ազգ մի որ յորժամ 'ի սաստիկ ամպոյն՝ հողմով ծածկի խառնեալ, որ յաստիկ ծխոյն և ամպոյն յերկնից շրջի, և օդն առնու զանազանաւ ջուրն. և 'ի վերայ մերձեալ ջրոյն, և առնի 'ի բարձրն՝ 'ի հրախառն և 'ի տաք օդն մտէ և շիջէ, և փակէ ամպհուր, և 'ի վերայ թափի. և յորժամ յերկիր հասանի՝ յոր ինչ դիպի այրէ և անցանի, և մնայ ամ երկաթի քարխշյ.

Եւ է ազգ մի որ անուն թէ սառ թաւաւ. և ոստոյ ոչ թուի. այլ յորժամ է շրջակայ սպառնալիս երկնից հնչէ, և սաստիկ արագապէս անցանէ է որ կնոջ զօրդ որ առքէ և հրախառն՝ ամ դձոր պատառէ, և երկայնութիւն երևի, և թուի թէ սառ թաւաւ.

Եւ է ազգ մի որ 'ի պատառել օդոյ 'ի սաստիկ հողմոյն՝ մերձն լսոյն հրակերպ երևի և օդն որ պատառեցաւ յիւրում գոյն և 'ի կցելն ծածկի զօրձնով. և մեք վասպարէլ անուն թէ սառ թաւաւ.

Նոյնպէս և այն՝ որ կայծակաւ անուն. զի յորժամ ամպն պատառի, 'ի զօրաւորն սրան լինի. և յիւրում շիկ լցն կայծակն լինի. Զի ամ հրահոն երկաթն՝ որ զկայծ քարն բաղխէ, երանէ ձայն, և երանէ հուր. նոյնպէս յորժամ հողմն զամպն պատառէ, 'ի պատառելն զօր առն առնէ, և հողմն 'ի յամպոյն հուր հանէ, և 'ի տեղի ուր անկանի վառէ.

Յատակն որոտն է, ուր կայծակն · բայց մեք յա-ռաջ զհրոյ լոյսն տեսանեմք, և ապա զորոտն լսեմք · զի աչքն այլ սուր է քան զականջն · և ահն զհետ ունի տե-սանէ, և ականջն զմտան լսէ · մի պնորէն զլոյսն 'ի հե-ռուն տեսանեմք, և յորժամ ձայնն 'ի վայր հասանի և մտի 'ի մեզ ապա ականջն լսէ · Եւ այս յորժամ 'ի պարզ ժամն լինի թռուցած ասող ասեմք·

**Թէ զի՞նչ է այն որ Լուսինն բոլ ունենայ · ԻԳ·**

Թանձր օդդ՝ որ ունի բոլոր զճառագայթ լուսնին, և նշոյլքն 'ի դուրս ելեալ յէ թանձր օդն՝ բոլորակ լինի. և է նշան ամպոյ·

## Վ Ե Ր Ջ

Առաջնոյ մասին տետրակիս ·

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ·

Յաղագս որ ՚ի սմա էջէալ ճառիցն՝ ծանուցաբանութիւն·

Զօրութիւն Աստուածոր բանիցս՝ նախ՝ զտարերաց դրութիւն և զկարգ ցուցանէ . և ապա՝ զի ՚ի շարժմանէ և ՚ի շրջագայութենէ երկնի՝ ծնանին ժամանակք՝ և կենդանիք և բուսականք, որք ՚ի ժամանակի· զոր խնամատունք սահմանեալ են բնութեան , այս է նծայլն արուեստն և առաջին զբնութիւն ծնունդ շարժման և կայանի , այս է շարժմանն երկնի, և կայականութեան երկրի·

Իսկ ապա թէ՝ ո՛չ նծայլն արուեստաւորն է, դրութիւն տարերաց խնամատութեամբ, զոր օրինակօրդ ցուցանէ· Իսկ թէ՝ զնորդ կայ հաստատուն երկիր, և ո՛չ ՚ի մէջի կայ երկնի· Այսպէս և զշրջէն երկնի՝ և զհաստատութեան զանազանութիւն թէ՝ ո՛չ զանազանին բնութեամբ· և զմիաբանութիւն՝ և զանձնայր ստեղծոյն զկայանան· Իսկ թէ զաշխարհս ՚ի վերայ երկոտասան կենդանակերպիցն ո՛չ են բաժանեալ· Իսկ թէ մոլար աստեղքն ՚ի կենդանակերպացն՝ ո՛չ են զանազանեալ բնութեամբ և գործով· և զինչ նշանակութիւն ունին Իսկ ապա ՚ի ներքին զօրից սկսեալ՝ որ է լուսին, և զեօթն զօտին ասէ և զաստեղսըն որ ՚ի նմա, և զբնութիւն նոցունց· կամ զինչ գործև ազդումն նշանացն՝ որ ՚ի նոցանէ լինի· և զինչ օգտինք ՚ի նշանացն՝ զոր յաղագս մերայօգտի եդ ՚ի նմա. Իսկ յարեգակնէդ՝ ուսցիս զփոփոխումն եղանակացդ, և զընթացս լուսաճոյցդ· և թէ քանի բաժանի աշխարհս, որ

տիւն

տիւն և գիշերն՝ ամանակքն և նուագելովն փոփոխին.

Ո՜ թէ չէ վայրապար գլուս և քննութեան իմաստասիրոյն. Ո՜ թէ յայտ է եղեալ ՚ի քննութեան տաւեղոյն՝ որ վն մեր օգտի՝ նշանք և գուշակմունք երեւի ՚ի նոսա և փոյթ օրինակաւ սատեղեալ են. որ չէ գործինք՝ թէ յատեղան՝ ած փորութիւն եղեալ. Ո՜ թէ վն էր զոււումն ումեք նախատէ ոք, զոր չէ պարտ առնել. և թէ առնէ զինչ է պատճառ. Ո՜ պատճառ այնմ՝ թէ՝ էր խոտելի աստեղացն բանս.

Ո՜ տար՝ ներբողական գովեստ երկնի. թէ որքան լուսաւորք քղ՝ յիմաստութիւն վարժէ զմեզ զոր բնական օրէնք ասեմք. Ո՜ տար՝ այլալանութիւն և բարոյականաբար՝ զլուսնին և զարեգականն զգործ և զկիրս՝ ՚ի խրատբնութիւն մարդկան. Ո՜ թէ լուսինն օրինակ էր հնոյ օրինացն, և արեգակն՝ աւետարանին, և աստեղքն մարգարէիցն. Ո՜ տար՝ զգալի արեգակն՝ յօրինակ առնել քն իմանալի արեգականն արդարութեան. և զխաւարն՝ ՚ի հայրական ծոցոյ. և զլուսնին մարմին լինելն, և ՚ի կուսական ծննդենէն զանօրինական ներգործութիւն մինչ ՚ի մեռ անգամ՝ զալուստն հաստատեալ եւս ուղիղ դաւանութիւն, և սնոյ աւետարանեալ.

Այս կարճառօտ փորձութիւն որ ՚ի սմա. և որք աշխատասիրաբար միտ դնեն՝ յոլովս գտանեն փորձութիւն ՚ի սակաւ բանիցս իմ՝ պատճառս տալով իմաստնոց. Եւ ՚ի այս սակաւ ծանօթութեան, և աղօթիւք ձերովք յանցանաց մերոց զթողութիւն.



Նորին՝ ՍՔ Ե. Խմատաուն Մաթթէոսեան Յօհաննու երգ համեցող էան՝ յաղագս երկնային շարժոց՝ ընծայեալ է 'ի ծնընդոց Բարեկամաց Խրիմեան Հայրիկ. բաց Խաչատուր տաճա-րանց.

Յամենահրաշ գործս արարչին՝ որ գոյա ցան.
մեծ և ահեղ՝ սքանչելիք՝ ն բղորձե ցան.
Ոմանք 'ի տես զարմանալեաց՝ յօրինե ցան
և այլք 'ի պէտս՝ փրկութեան՝ մարդկան տա ճան.
Ջանքաւորեանց՝ արարածոց՝ մասունք լըր ման.
'ի յերկնային թիւ տարորոշեալ՝ ը 'անե ցան
Շլացուցիչ սկիզբըն և հիմունք՝ հաստատե ցան.
'ի յերկուս անկիւնագիծս տա կայա ցան,
Նախ երկնայինն՝ բոլորակէն՝ բանք ձևա ցան.
մէջ տա նըմին՝ հաստատութեան՝ երկնի և գան
'ի միջնեալ՝ մարգարէ իւրն նախնա կան.
զի պայծառ՝ տա ծոյներով՝ ընծանե ցան.
Արքա չորից՝ տարերց մասունք՝ ըսկըզբնա կոն
յորմէ մարմինք՝ տարրակենաց՝ հաստատե ցան
'ի հոր և ցուրտ՝ բնութի հողոյ՝ որ ըստորա ցան
ցրտին և պէջ՝ բնութի ջրոյ՝ որք խառնե ցան.

 Բաց

Բաղկացութիւնք՝ երկրիս կայից՝ կատարե ցան.
որք միշտ անշարժ՝ կային շարժին՝ յեղյեղա կան.
Եւ և գիծին՝ բնութիւն օդոյն՝ և ջերմա կան.
որ ընդ հրոյ՝ ջերմին և չոր՝ վերամբարձ ման.
Նմանապէս՝ կամարն երկնի՝ խորան ձգե ցան.
որք մշտաշարժ՝ շարժմամբ շրջին՝ անյեղա կան.
Յոր իմաստունք՝ ներհմտութ՟՝ յայս վարժե ցան.
և եղական՝ բնութեն գտիցս՝ եղին սահ ման.
Եւել զբնութիւն ծնունդ շարժման՝ որք կայա նան.
որք 'ի շարժում՝ և յանշարժից՝ տարերց ծը նան.
Գեկօք թեւոց՝ կրկլն բնութեն՝ միշտ ընթա նան.
որք 'ի ծովու՝ այսմ աշխարհիս՝ կան ծըփա կան.
Եւրդ շարժելով՝ բոլորն երկնի՝ անդընդա կան.
միշտ պնդելով՝ զկայանս երկրի՝ անզատա կան.
Գնդեցկապէս՝ Թաւալով սմին՝ հաստատա կան.
ոչ ցրուելով՝ սորին բնութեն՝ ըստ տարրա կան.
Այնպէս անշարժ՝ բնութիւն երկրի որ գոյա ցան.
ինքնամբ պրկեալ՝ պարաբերէ՝ զերկնի շըր ջան.
Երկօքումբք՝ բնական կրիւքն՝ անլուծա կան.
միմեանց լինին՝ նիւթ և պատճառ՝ յարմարա կան.
Բուլէից՝ տարերց մասունք՝ որք խառնե ցան.
անքակտելի՝ սիրով 'ի նոյն՝ յարմարե ցան.
Կատարեցան զարդք աշխարհիս՝ որք էա ցան.
յանմահ բանէն՝ արարչական՝ որով ստեղ ծան.
Նոյն արարիչըն հրաշագործ՝ զարմանա զան.
ոչ թէ բանիւ՝ միայն արար՝ անքննա կան.
'Ի սմին արուեստս հանճարոյ՝ իմաստնա կան.
եդ 'ի բնութիւ արարածոցս դասա կան.
'Ի ըստորին կոյս կայացեալ՝ հող ծանրա կան.
մերձ առ նըմին շարադասեալ ջուր գիձա կան.

 Խո

Խորանաձև՝ կամարացեալ՝ օդ վերինա կան.
զբոլորն բնաւ՝ շրջապատեալ՝ հուր կիզա կան.
Նշման սըմին՝ քեզ յարայոյցըս ցուցա կան.
յանօթ արկեալ՝ աւազ և ջուր՝ իւղ նիւթա կան.
Պէր ամանոյն՝ և նիւթ իւղոյն՝ առ վերոյ կան.
Ներքոյ աւազ՝ և զինի ջուր՝ զետեղա կան.
Ռոպէից՝ բոլոր մասանց՝ պարագրա կան.
օդ ընդ հրոյ՝ հողմոյ շնչմամբ՝ վեր ամբար ձան.
Որով երկիրս՝ այս գնդաձև՝ առ կայա ցան.
'ի միջոցի՝ աստ մնալով՝ անշարժա կան.
'Ի սոյն և այլ՝ քեզ օրինակ՝ համանը ման.
զձու հաւու՝ առ գաղափարըս տեսա կան.
Շրջապատեալ՝ կեղևըն կարծր՝ և նիւթա կան.
որպէս հրեղէն՝ արփւոյն կամար՝ պարաձգե ցան.
Խորանն երկրորդ՝ զկնի սորին՝ օդոյն նը ման.
որ մնաձև՝ ընդ խեճեպոյն՝ 'ի կառուց ման.
Այլ և երրորդ՝ է սպիտակուցըն ջրոյ նը ման.
և դեղնագոյնն՝ առ միջոցաւըն գնդա կան.
Նոյնպէս երկիրս՝ առ միջոցի՝ յարամնա կան.
անսիւն աննեց՝ և 'ի վերուստ անկախա կան.
'Ի ներքուստ՝ հողմոյ հնչմունք՝ ընդդիմա կան.
և բընականն՝ իւր ծանրութիւն՝ ոչ ամբառ նան.
Հաւասար՝ վեցակուսի՝ են զատա կան.
զառ 'ի վեր՝ և 'ի ներքուստ՝ և կողմնա կան.
Արդ 'ի յերկրորդ՝ աւուրըն մեծ արարչու թն.
յորում հրամանն՝ ել յարարչէն՝ հաստատու թն.
Յօդոյ հնչմամբ՝ ջուրք 'ի ջրոց՝ բաժանե ցան.
և հրեղէնի՝ արփւոյն կիզող՝ դիմակ առ կան.
Որպէս զի մի՝ զաշխարհ լուծցէ՝ տօչորա կան.
սաստիկ հըրատըն բոցագոյն՝ և կիզա կան.

Յուրտ

Ցուրտ բնութիւն՝ իւր ջուր լինի՝ կերակրա կան.
զի մի աշխարհ՝ բաղադրեալ՝ 'ի հրոյն լուց ման,
Մայրքիկ՝ երկլին միմեանց՝ են յատկա կան.
արտաքապէս՝ շարժմամբ շրջին՝ անլռա կան
Պարառեալ՝ շրջափակեն՝ զգունդն երկրա կան.
և 'ի միմեանց՝ են հեռագոյն՝ նոյն չափա կան,
Լայնութիւն են՝ չորեք կուսի՝ եզերա կան.
և խորութիւն՝ ընդ բարձրութենըն զուգա կան,
Ոչնիս ողջոյ՝ իմաստութիւ քեզ բաւա կան.
որով պատմես՝ զփառս Այ՝ անճառա կան,
Ընծայալ հոգւով՝ 'ի յարարածս՝ այս եղա կան.
գովել զանունն՝ 'ի յեղելոցս՝ անմահա կան,
Արդ մինչև ցայս՝ վայր խօսեցեալ՝ բանք նախնա կան.
յաղագս երկուց՝ կիսագնդացն՝ եռայարկ կան,
Նիւթ ցանկալի՝ ուսումնասէր՝ մտաց մարդ կան.
որով կրթին՝ վարժմամբ բանի՝ տեսողա կան.
Ուստի շարժմանց՝ զարդուն երկնից՝ անղեկա նան.
և յարկածից՝ ապագայից՝ զգուշա նան,
Հիւսեալ պսակ՝ բանից կարգի՝ յարմարա կան.
'ի զարդ գլխոյ՝ բանասիրեդ՝ յոյժ ըղձա կան,
Այն և նշան՝ անլուծ սիրոյ՝ եղբայրա կան.
և մեզ յանձնիւրս՝ ժամանակաց՝ պատճառ յիշ ման,

Նորին ասացեալ յաղագս Երկնի.

Այն որ յառաջ՝ քեզ ձառեցան՝ բան նախնա կան.
յաղագս երկուց՝ տրամադրելոյն՝ անկիւնա կան.
Այժ տարերացըն դաս կարգի՝ միջնորդա կան.
և արուեստից՝ խառնուածոյն՝ յարմարա կան.
Արդ վերառին՝ դառնամք 'ի նոյն բան բաղձա կան.
և սկսանիմք՝ յաղագս երկնի՝ ըստ հետև ման.
Այժ զի անձամբ՝ յայս ձեռնարկել՝ չեմք բաւա կան.
զհոգին ած՝ վերակարդամք՝ մեզ օգնա կան
Նախ զառաջինն՝ զերկինն յիշեմ՝ ըզվերինա կան.
և համառօտ՝ խել անցանեմ՝ անքննա կան.
Որ է եթեր՝ զաս կարգացին՝ ազգն յունա կան.
և հուր թագեալ՝ այնք որ լեզուաւ՝ քաղդէա կան.
Իսկ հրատ՝ նա բոցագոյն՝ և պարզա կան.
մարմին աննիւթ՝ և անչարչար՝ անհաստա կան.
Մէջ է ունք՝ ոչ ոք 'ի նմա՝ այլ զատա կան.
զի հինգերորդ՝ է 'ի չորեցս՝ առանձնա կան.
Արարողըն՝ ածութեն՝ անձառա կան.
ձգեալ ընդդէմ՝ լուսեղինացն՝ անմարմնա կան.
Զբոլորս ընաւ՝ շրջապատեալ՝ զօրէն ձեղու ան.
արտաքայինս՝ առեալ շրջան՝ անսեսա կան.
Արդ ըզգործս՝ կամիմ թողուլ՝ ասել ըզ բան.
և զերկրորդէս՝ սկսայց ձառել՝ յօժարա կան.
Սա հաստեցաւ՝ երկին երկրորդ՝ հաստատա կան.
որ 'ի ջրոյ՝ և 'ի յօդոյ՝ անուանե ցան.
Մէջ պատեալ՝ ոչ թանձրացեալ՝ այլ լուծա կան
որպէս ըզջուրս այս որ առ մեզ՝ են հոսա կան.
Իսկ 'ի յօդոյ՝ փրչմամբ եղեալ՝ որպէս խո րան.
գըմբեթաձև՝ կամարացեալ՝ նըման ձեղու ան.

Նոյն

Նոյնպէս և հողմ՝ և օդ ափանալ՝ տարածա կան
որպէս յանօթ՝ ինչ ժողովեալ՝ ՚ի նիւթա կան։
Ըզձև տալեալ՝ վերինն երկնի՝ միշտ շրջա կան.
լուսաւորացդ՝ եդեալ սա տուն՝ և կայա րան։
Երեւմ՝ վիպեն՝ զերբ զործոյրն՝ արարչա կան.
թէ եդ զնոսա՝ ՚ի յերկնային՝ հաստատու թեն։
Բայց որոշման՝ սոցա տեղիք՝ են զանա զան.
զոր մարդակ՝ աստեղքն ունին՝ ընթացա րան։
Եօթնաստեղեան՝ անուանեցան՝ սոքա խո րան.
յամենց գօտիք՝ և պարունակ.ք՝ պարբերա կան.
Մի քան զմի՝ են գերազանց՝ վերադրա կան.
և ութերորդ՝ զունդն անմոլոր՝ և բարձրա կան։
Յոր կերպարանք՝ են կենդանեաց՝ երկոտա սան.
որովք բոլոր՝ կամարն երկնից՝ յայս չափե ցան։
Նոյն և երկրիս՝ հաստատութեն՝ տեղի կա լան.
յոր ըստ բնականն զօրութեն՝ ազդեն նը շան։
Ով և աշխարհ՝ կերպարանօք՝ մարդոյ ցու ցան.
և երկնային՝ բոլորակին՝ վիճակե ցան
Խոյն է գլուխ՝ որ է աշխարհին պարսկա կան. ♈
ցուլ պարանոցն՝ որ են կոզմունք՝ բաբելա կան։ ♉
Երկաւորին՝ ձեռքն են և ուսքըն զամրա կան. ♊
և խեցգետնին՝ լանջք կոչեցեալ՝ են հայաս տան։ ♋
Առիւծն սրտին՝ խոկ և կողիցն՝ ասիա կան. ♌
կոյսն ներքին՝ որովայնին՝ ելլադա կան։ ♍
Կշիռն որ է՝ կըշտոյն երկուց՝ լիբէա կան. ♎
խոկ և կարիճն՝ է անդամոյն՝ ազգ կրետա կան։ ♏
Աղեղնաւոր՝ բարձքն և երկք՝ իտալա կան. ♐
և այծեղջիւր՝ ծունկք երկաքին՝ ասորես տան։ ♑
Ջրհոսն սրունքն՝ է աշխարհին եգիպտա կան. ♒
և ձուկըն թաթք՝ ոտից երկուց՝ է հնդկաս տան։ ♓

Երկոտասան կենդանակերպքս՝ որ կոչե ցան.
ըստ համարոյ՝ ամսոց տարւոյն՝ հանդունա կան
Եւ աստիճանքն՝ որ 'ի նոսա՝ երեւնա կան.
աւուրց ամսոյն՝ են զուգաթիւք՝ և համա բան
Իսկ բովանդակ՝ կամարն երկնից՝ համարա կան.
երեք հարիւր՝ վաթսուն թուով՝ են աստի ճան.
Որովք ԺԲ նոյն՝ թիւ համարոյ՝ աւուրք ծը նան.
յերկոտասան՝ ամիսք տարւոյն՝ որ գոյա նան.
Թողում ըզհետ՝ թիւ աւելեացն՝ անքննա կան.
զի խոր ունի՝ այն տեսութիւնըս մանա կան.
Դարձայց 'ի նոյն՝ կերպ կենդանեացն՝ երկոտա սան.
և ըզբնութեանցըն ճառեցից՝ նոցա սահ ման
♈ ♌ ♐ Խոյն և առիւծն՝ աղեղնաւորն՝ են ջերմա կան.
չոր և հրայինն՝ բնութիւն իւրեանց՝ պարեգա կան.
♉ ♍ ♑ Ցուլն և կոյսն՝ և այծեղջիւրն՝ են հողա կան.
հով են և չոր՝ և երկրայինն՝ ցամաքա կան
♊ ♎ ♒ Երկաւորըն՝ կշիռ և ջըրհոսն՝ են հողմա կան.
ջերմ և կակուղ՝ են բնաւորեալ՝ դալարա կան.
♋ ♏ ♓ Խեցգետինըն՝ կարիճն և ձուկն՝ են ցըրտա կան.
դէճ և ջրայինն՝ են զօրութեամբ՝ և զովա կան:
Սոցա չորից՝ տարերց բնութեանցըն զուգե ցան.
'ի յարարչէն՝ իմաստութեամբ՝ կըշռե ցան.
Աստեղք մոլարք՝ որք Է նոսա՝ միշտ ընթա նան.
ունակացեալ՝ բնութեանց նոցին՝ զազդումըն տան:
Սոքա նըման՝ են չինուածոյ՝ որպէս ըզ տան.
որք և անշարժ՝ կան 'ի տեղւոջըն յաւէտ եան.
Մոլարք: Աստեղք նըման՝ ուղեւորաց՝ են անցա կան.
որք 'ի նոսա՝ իջեւանին՝ և ընթա նան.
Յորժամ 'ի նոյն՝ բնութի միմեանց՝ հանդիպե նան.
անձնունք բարեաց՝ և քաղըրութեան՝ տան մեզ նը շան.

Իսկ

Իսկ 'ի նոցունց՝ հակառակացըն սպառա — ման.
ցուրտն ընդ ջերմոյ՝ չորն ընդ գիճի՝ խառնա — կան:
Ցաճք և հարուածք՝ 'ի յաշխարհի՝ են ցուցա — կան.
ընդ հակառակ՝ բնութեանց նոցունց՝ որ վճռա — կան:
Թողլից ճառել՝ զերկար սոցին՝ զաղդմանց բղ — քան.
զամանց անշարժ՝ ասել նոցա՝ կամ շարժա — կան:
Կամ զոր 'ի մաքըն՝ ասեն նըշան՝ և կերպա — րան.
Թէ 'ի նոցունց կերպ կենդանեացըն ձևա — նան:
Դարձայց 'ի Թիւ մոլորակացն 'ի եօթնա — կան.
որք տանուտէարք՝ եօթանց դարուց՝ անուանե — ցան:
Նոյն և ըստ աւուրցըն շաբաթու՝ համարե — ցան.
և ընդ պահու՝ ժամուց աւուրց՝ բաժանե — ցան:
Նախ 'ի ներքին՝ գօտին սկսայց՝ խոնարհա — կան. Լուսինն որ հոլէ և գէտ.
որ և երկինք՝ լուսնին ասի՝ և կայա — րան:
Սա սելենոս՝ անուն կոչի՝ ընդ յունա — կան.
այլ և ղամար՝ նա անուանի՝ ընդ տաճկա — կան:
Իսկ մեք լուսին՝ ասեմք սըմա՝ ընդ հայկա — կան.
վասն զի լոյս՝ ունի նա յինքն՝ իւր սեփհա — կան:
Այն աստիճանք՝ գնացից նորա՝ յոյժ նըրբա — կան.
զի նա տեղեաւ՝ մերձ է յերկիրս՝ և մօտա — կան:
Աստի յաւուրս՝ երկուս և կէս՝ 'ի յընթաց — ման.
զկենդանակերպըն կատարէ՝ և զաստի — ճան:
'Ի քսան և եօթըն Թիւ աւուրցըն կատարա — ման.
դարձեալ 'ի նոյն՝ գայ վերըստին՝ տեղ ծընընդ — եան:
'Ի քսան և ինն՝ օր և կիսոյն՝ աւարտա — կան.
դարձեալ նորէ՝ զիւր հնութիւնըն մանկա — կան:
Նայց ըզամանէ՝ ոմանք ասեն՝ արք գիտնա — կան.
Թէ ոչ ունի՝ լոյս յինքենէ՝ իւր բընա — կան:
Նոյն հայելի՝ ընդդէմ կացեալ՝ արեգա — կան.
և 'ի նմանէ՝ ճառագայթէ՝ զլոյսն իւրա — կան:

Այլ մեք աւանդք՝ ի սուրբ գրոց՝ ճշմարտա կան.
Թէ լոյս լուսնին է յինքենէ՝ արարչա կան.
Զի թէ ճրճի՝ մի փոքրագոյն՝ և սողնա կան.
ունի լուսին՝ ապաւորեալ՝ ՚ի յերբ որ տան.
Որով բազմիցս խաւ ընթեռնուն՝ ՚ի ժամ մի թան.
՚ի կարգ գրոյն՝ զնա տանելով՝ ՚ի տողս կան.
Նոյն ոչ է զարմանք ասել՝ զայս մեզ ըղ բան.
Եթէ բազում՝ լուսինն ունի բնկրգինա կան.
Իսկ որ նշան՝ և գիծ ՚ի նմա՝ է դրոշմա կան.
այն շուք երկրիս՝ է և ծովու՝ որք կերպա նան.
Զի հայելի է աշխարհիս՝ նա ցուցա կան.
նա և երկրի՝ չափ մեծութիւն՝ ասեն ըղ բան.
Թէ օրինակ՝ այսպէս խնդրես՝ հաւանա կան.
՚ի քաղաքաց՝ բազմաց ունիս՝ ակնեղերա կան.
Զի յամ՝ քաղաք փոքրացք են յաղնա կան.
և միայն՝ զնա տեսանեն՝ գէմ յանդի ման.
Նշան։ Լուսնի։ ՚ի ժամանակս՝ անուրց ապրեաց՝ է մեղ նը շան.
և որք օդոյ՝ փոփոխութեանց՝ տեղեկա նան.
Նաւաստեայք՝ և ագօթիւք՝ առ տէր կար դան.
՚ի բերմանէ՝ չար պատահմանց՝ զգուշա նան.
Իւր որք ՚ի ծով՝ նաւել կամին՝ վ ճառա կան.
՚ի նոյն տեղւոյ՝ նաւահանգստին՝ զետեղա նան
Որք ճանապարհ՝ հեռի ունին՝ կամ լեռնա կան
ամէն ՚ի սմա՝ զգուշացին՝ անվնասա կան
Իւր այս նշան՝ սուրբն սիրոյ՝ արարչա կան.
զի ճոխոյն՝ մի կորիցեն՝ որդիք մարդ կան.
Այլև յանդգամս՝ իսկ տեսանի՝ նշան աճ ման
և արեգական՝ բնութեանց լինել՝ այլայլա կան
Զի ՚ի յամենայն՝ նորին անձն՝ և լիա նան.
և ՚ի մաշելն լուծանելն՝ և թուլա նան.

Զնոյն

Զնոյն և 'ի ջուրս տեսանես առ ծովա կան.
որք լինան՝ և թերանան՝ նովին նը ման:
Բայց զարմանամ՝ ես յէ լուսնին եղեալ սահ ման.
որ միշտ անձնամբ՝ և հրնութեամբ՝ փոփոխա կան:
Զի օդային՝ նիւթ ամենայ՝ է երկրե բան.
որպէս պատեանք՝ գաղտակութի՝ ընդհարծրա կան:
Յորժամ երթայ՝ լուսինն մերձ՝ արեգա կան.
նուազութի՝ լինի լուսնոյն՝ ունակա կան:
Զի զբօսարակ լուսնոյն ունի մերոյ կող ման.
և այն ընդդէմ՝ արեգակնէն՝ 'ի հայեց ման:
Իսկ յառանել՝ նովին 'ի բայց հեռացա կան.
յորժամ լինի՝ լոյսն լուսնին և մեծա նան:
Բոլոր լուսնոյն՝ խնանելով՝ ներքնոյն կող ման
և բառանէրին՝ հալածելով՝ առ մերձա կան.
Յորժամ 'ի ծնունդն՝ իւր երևի՝ նորագա կան
յարևմտից՝ զհայեց ունի՝ արևել եան:
Իսկ յարևելս՝ 'ի լրումնէն՝ մաշագա կան
առ յարևմուտս՝ ըզդէմն ունի՝ ըզհայեց ման
